Համարի զարմանքը. Հայոց պետությունը չի կարողանում ճշտել-պարզել, թե ովքեր են «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ բաժնետերերը եւ ինչ ճանապարհով են դարձել սեփականատեր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ.ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:

ISSN 1829-3468

ՈՒՐԲԱԹ, 31 ՀՈՒՆՎԱՐԻ 2020Թ.
№ 2 (518)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Հայերին հնարավոր չէ հաղթել, նրանց հաղթել կարելի է միայն մասնատելով, միմյանց դեմ հանելով:

ԴԱՐԵՀ ՄԵԾ
Աքեմենյան Պարսկաստանի արքա

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «Իրավապահները զբաղվում են Զանգեզուրի պղնձամոլիբդենայինի սեփականատերերի գործով»

Այարեվերջին տեղեկություններ հրապարակվեցին Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում բաժնետերերի փոփոխության մասին, այդ ամենի հետ նախկին որոշ պաշտոնյաների փոխկապակցվածության մասին, ինչ կարող եք ասել այդ առնչությամբ: Եվ, ի վերջո, ովքեր են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականատերերը:

Ի պատասխան Սիվիլնեթի ներկայացուցչի այդ հարցի, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պատասխանեց. *«Գիտեք, չեմ թաքցնի՝ այդ տեղեկությունները շրջանառվելու պահին, ոնց որ մամուլում նման բան գրվեց, հանձնարարել եմ, որ ստուգեն այդ տվյալները, եւ եթե այդպիսի բան պարզվի, այդտեղ կարող են որոշակի կոռուպցիոն ռիսկեր ի հայտ գալ: Այս պահին չեմ կարող ասել: Մենք ունենք մի քանի վարկածներ, մի քանի նախնական տեղեկություններ, որոնք այն մակարդակի չեն, որ մենք հրապարակենք»:* ■

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսը Կապանում

Հունվարի 25-ին Կապանի «Սյունիք» կինոթատրոնում տեղի ունեցավ վարչապետ Նիկոլ Փաշինյանի մամուլի ասուլիսը՝ հանրապետական եւ մարզային լրատվամիջոցների ներկայացուցիչների մասնակցությամբ: Միանգամից ասենք, որ այն անցավ կիսադատարկ դահլիճում: Եվ հիմնական պատճառն այն էր, որ կառավարությունը չէր հոգացել լրագրողների մայրաքաղաքից տեղափոխման խնդրի մասին, ինչը վարչապետը մեկնաբանեց այսպես. *«Որովհետեւ դուք մեզ անընդհատ մեղադրում եք պետական միջոցներն աննպատակ վատնելու մեջ, այդ պատճառով մենք այդ ծախսերն իրականացնելու ենք ավելի նպատակային ձեւով»:* Մարզային լրատվամիջոցների ներկայացուցիչներին էլ մի ձեռքի մատների վրա կարելի էր հաշվել:

Ինչեւէ, ասուլիսի մասնակիցներին բաժանվել էր «100 փաստ նոր Հայաստանի մասին» բրոշյուրի 3-րդ թողարկումը, որ հրատարկվել էր հունվարի 25-ին Կապանում տեղի ունենալիք ասուլիսին ընդառաջ: Վարչապետը մոտ երկու ժամ մեկ առ մեկ ներկայացրեց երկրի տարբեր ոլորտներին առնչվող փաստերը՝ երբեմն-երբեմն հարկ համարելով բացատրություն կամ մեկնաբանություն տալ այս կամ այն փաստի առնչությամբ: Իսկ ընթերցանության ավարտին անդրադարձավ այն ամենին, ինչ նախատեսվում է իրականացնել Սյունիքի մարզում, մասնավորապես, նախատեսվում է սկսել Կապանի թիվ 4, Հարժիսի Համլետ Մինասյանի, Դարբասի դպրոցների շինարարությունը, ընդ որում՝ կկառուցվեն մոդուլային դպրոցներ՝ անհրաժեշտ գունային լուծումներով, ավարտվում է Սիսիանի բժշկական կենտրոնի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքները, որից հետո շինարարության մրցույթ կհայտարարվի: Նախատեսվում է պետական միջոցներով վերակառուցել բժշկական կենտրոնի հիվանդանոցային հատվածը, որի շնորհիվ համայնքը կունենա 40 մահճակալանոց հիվանդանոցային հատված՝ ներառյալ վիրաբուժական բաժանմունքը: Սյունիքում կիրականացվեն զգալի ճանապարհաշինարարական աշխատանքներ, մասնավորապես, Տաթեւ-Աղվանի ճանապարհատվածը, որ տնտեսական եւ ռազմավարական նշանակություն ունի:

Վարչապետին ուղղված հարցերը բազմաբնույթ էին եւ համահայկական հնչողությամբ: Մենք դրանցից առավելապես առանձնացրել ենք նրանք, որոնք առնչվում են մեր մարզին: **Այդ հարցերի ու պատասխանների մասին՝ 2-րդ էջում:**

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

«Չաարատ Կապանը»՝ մարզկենտրոնի կայուն զարգացման երաշխավոր

Ավարտին է մոտենում 2020 թ. առաջին ամիսը, բայց շարունակվում են անցած 2019-ի արդյունքների ամփոփումը, կատարվածի, բացթողումների վերլուծությունները, ընթացիկ տարվա ծրագրերի ճշգրտումները...

Այդ ամենի համապատկերի վրա չի կարելի չնկատել «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության պոզիտիվ դերակատարությունը Սյունիքի մարզկենտրոնում եւ մերձակա բնակավայրերում:

Ի՞նչն է առաջին հերթին աչքի զարնում եւ դրական հույզեր հաղորդում հանրային տրամադրություններին:

Միգուցե եւ տարօրինակ թվա, բայց տնտեսական-արտադրական ցուցանիշներից, պետությանը վճարված հարկերի ծավալներից առավել մարդկանց հետաքրքրում են բարոյահոգեբանական, սոցիալական հարցերը, մեր երկրամասի ու տեղի բնակչության հանդեպ ընկերության վերաբերմունքը:

Այդ առումով դրվատելի է հատկապես լեռնահարստացման կոմբինատի սեփականատիրոջ եւ ընկերության

էջ 3

Կառավարությունը նախատեսում է սկսել Կավարտի հանքի ռեկուլտիվացիայի աշխատանքը

ՀՀ կառավարությունը նախատեսում է շուտով սկսել Սյունիքի մարզում գտնվող Կավարտի մետաղական հանքի ռեկուլտիվացիայի աշխատանքը: Այս մասին Փաշինյանն ասաց հունվարի 25-ին Կապանում հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում:

«Մեր վերջին աշխատանքային հանդիպման ժամանակ Շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանը հավաստիացրել է, որ շատ շուտով մենք կսկսենք Կավարտի հանքի ռեկուլտիվացիայի աշխատանքները: Այսինքն՝ հանքը կփակվի եւ այդ տարածքը լիարժեք կվերադառնա բնությանը», – ասաց Փաշինյանը:

Մինչեւ 1950-ական թթ. Կավարտի հանքը շահագործվել է որպես փակ հանք, իսկ մինչեւ 1985թ. շահագործվել որպես բաց հանք: Հայաստանի անկախացումից հետո շահագործումը վերսկսվել է 1999 թվականին: Հետագայում՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատի մասնավորեցումից հետո, նոր սեփականատերը շարունակել է Կավարտի բացահանքի շահագործումը: Սակայն 2-3 տարի անց նորից դադարեցրել այն:

armenpress.am

Վարչապետը չունի հավատ ներշնչող կադրերի այն նվազագույն քանակը, որը պիտի վստահությամբ պարուրեր մեր ժողովրդին

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Նիկոլ Փաշինյանը հայ ժողովրդի լուսավոր կյանքի հավատն իր կերպարի մեջ մարմնավորած այն կորովի անհատն էր, ում հաջողվեց, նախկին կոռումպացված իշխանությունների հանդեպ տածած խորը հիասթափության ու ատելության ալիքի վրա, ժողովրդին աննահանջ պայքարի կոչելով՝ փողոց դուրս բերել եւ այդ ապազգային, հակաժողովրդական համակարգը ներկայացնող, իրեն ամբողջովին սպառած ու նեխած քաղաքական ուժին հեռացնել ասպարեզից: Սա մեր իրականության մեջ համարյա թե՝ անպատկերացնելի, պատմական իրադարձություն էր...

Բայց պետության առաջին դեմքի պատասխանատվությունը լիարժեքորեն իր ուսերին վերցնելու ծանրությանը միանշանակ նա պատրաստ չէր: Առ այսօր նա չունի հավատ ներշնչող կադրերի այն նվազագույն քանակը, որը պիտի վստահությամբ պարուրեր մեր ժողովրդին...

Գերազնիվ, լայնախոհ, բանիմաց, ժողովրդի ու պետականության շահը գերակա համարող նկարագրի տեր նվիրյալ անհատների միջոցով են վսեմ գաղափարները կյանքի կոչվում...

Ծանծաղ ներաշխարհ ունեցող անպատասխանատու մարդկանցով ու անբարո պրովոկատորներով պետություն չես կառուցի, ուր մնաց թե՝ հզորացնես... ■

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ. «Այն բանից հետո, երբ բեռնատարների հայտնի սեփականատերը 2018 թ. մայիս-հունիսին դարձավ երկրի իրավապահ մարմիններից մեկի ղեկավար, մեկ շաբաթվա մեջ դասը քաղաքացիական գործ հարուցվեց «Սյունյաց երկրի» դեմ»

Սամվել Ալեքսանյանի հարցը վարչապետ Նիկոլ Փաշինյանին

– Պարոն վարչապետ, մենք ողջունում ենք Ձեր հերթական այցը Սյունիքի մարզ, կարծում ենք շատ ճիշտ ընտրություն եք կատարել՝ Կապանում անկացնելով ասուլիս, մենք միշտ չէ, որ հնարավորություն ենք ունենում այցելել մայրաքաղաք՝ մասնակցել Ձեր հանդիպումներին, ասուլիսներին եւ բնակչությանը մտահոգող հարցեր չենք կարողանում փոխանցել երկրի ղեկավարին: Ուստի սա մի առիթ է՝ շփվելու հանրապետության վարչապետի հետ, եւ սա շատ ճիշտ ձեւաչափ է:

Երբ որ իմացան, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Սյունիք է գալու, Մեղրի համայնքի ավագանու անդամներն այցելեցին թերթի խմբագրություն եւ մի ծրար փոխանցեցին՝ Ձեզ փոխանցելու համար:

Իսկ երեկ երեկոյան խմբագրություն են եկել Կապանի «Գանձասար-Կապան» ֆուտբոլային թիմի ներկայացուցիչները եւ խնդրել Ձեզ պարզապես հիշեցել, որ Դուք երկու անգամ հրապարակավ անդրադարձել եք այդ խնդրին, հավաստիացրել, որ ֆուտբոլն արագ կվերադառնա Կապան, ու հարցը մինչեւ այժմ լուծված չէ:

Նաեւ երկու-երեք օր առաջ, չհասած Արծվանիկ բնակավայր, ճանապարհը փակվեց մոտ 40 րոպե, բնապահպաններն ինձ խնդրեցին Ձեզ փոխանցել հետեւյալը՝ մայրաքաղաք վերադառնալիս գոնե երկու րոպե կանգնել եւ նայել Արծվանիկի պոչամբարին ու նոր միայն շարունակել ճանապարհը:

Նիկոլ Փաշինյան - Ես բոլորի մտահոգությունը հասկանում եմ, բայց եթե Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ասեն՝ մեր բոլոր խնդիրները լուծեք, դա չի լինելու: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականատերերի հետ հանդիպման ժամանակ ասել եմ, որ մի խնդրանք ունեմ: Դա այն է, որ պետք է կոմբինատի գործունեությունը համապատասխանեցվի եվրոպական ստանդարտներին, ժամանակակից ամենաբարձր ստանդարտներին: Բայց եթե այդ մարդկանց ասենք՝ երկու շաբաթ ժամանակ ենք տալիս, դա իրականություն դարձրեք, կնշանակի ասել՝ փակել ձեռնարկությունը: Դա նշանակում է, որ պիտի լինի որոշակի ըմբռնում ընդհանուր տրամաբանության մեջ համագործակցության, որ այդ խնդիրը լուծենք:

Ֆուտբոլի առնչությամբ՝ Կապանում տեղի ունեցած հանրահավաքի ծամանակ նույնիսկ ուղիղ հանձնարարական եղավ, որ կոնկրետ ժամկետում լուծվի այդ հարցը, ցավոք սրտի չի լուծվել: Հույս ունեմ, որ ֆեդերացիայի նոր ղեկավարությունը մեր աջակցությամբ այդ հարցը կլուծի: Համոզմունքս է, որ ֆուտբոլի ֆեդերացիան այդ հարցը կլուծի:

Կապանցիներն էլ մարզադաշտի սեփականատերերին պիտի մղեն, որ այդ հարցը լուծվի: Երեք տարբեր սուբյեկտներ կան, պիտի համաձայնության գան:

Ինչ վերաբերում է Մեղրի համայնքի ավագանուն, զարմացած եմ, որ ցանկանում են կառավարությանը ծրար փոխանցել եւ չեն կարողանում:

Սամվել Ալեքսանյան – Հիմա «Սյունյաց երկրի» խնդրի մասին: Թերթը, առհասարակ մամուլը շատ ծանր օրեր է ապրում Սյունիքում: Օրինակներ բերեմ՝ կհամոզվեք:

> *Տեղի է ունեցել մի աննախադեպ բան... Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ կոկրետ անձի մասով դադարեցվել է Սահմանադրության 42-րդ հոդվածի գործունեությունը Սյունիքում:*

Վերջին երկու-երեք տարում երեք քրեական գործով «Սյունյաց երկիրը» ճանաչվել է տուժող՝ կայքի վրա հակերային հարձակում, թերթի խմբագրի վրա հարձակում եւ խմբագրության մեքենայի հրկիզում: Երեք գործն էլ, առանց բացահայտելու, կասեցվել են: Պատկերացնում եք, կա տեսանյութ, որ ցույց է տալիս, թե ինչպես են 2019 թ, փետրվարի 5-ի գիշերը հրկիզում մեքենան, բայց քանի որ նույն օրը նախկին մարզպետներից մեկը հայտարարել է, թե մեքենան ինքնահրկիզվել է, ոչ ոք չի համարձակվում անցնել այդ վարկածի վրայով: Օրեր հետո գտնվում է տեսանյութը, որն արտացոլում է, թե ինչպես են «Սյունյաց երկրի» մեքենան հրկիզում: Այդքանից հետո անգամ հանցագործները չեն գտնվել, եւ գործը կասեցվել է:

Այնուհետեւ՝ օրը ցերեկով հարձակվում են «Սյունյաց երկրի» խմբագրի վրա. առնվազն վեց-յոթ հոգի դա տեսնում է, բայց հանցագործներին գտնելու փոխարեն գործը կասեցվում է:

Այնուհետեւ՝ տեսեք, թե ինչ տեղի ունեցավ 2018 թ. մայիս-հունիս ամիսներին. այն բանից հետո, երբ բեռնատարների հայտնի սեփականատերը դարձավ երկրի իրավապահ մարմիններից մեկի ղեկավար, մեկ շաբաթվա մեջ 10 քաղաքացիական հայց հարուցվեց «Սյունյաց երկիր» թերթի եւ նրա խմբագիր Սամվել Ալեքսանյանի դեմ: Չէ, մենք չենք խնդրում, որ մեզ խնայեն, զիջեն, եթե չարաշահել ենք խոսքի ազատությունը, պետք է պատասխան տանք: Մենք ընդամենն ուզում ենք, որ դատավարությունն ընթանա Քաղաքացիական դատավարության օրենսգրքի հիման վրա:

Տեսեք՝ ինչ է կատարվում: 10 հայցից չորսը վարույթ է ընդունվել հայցային վաղեմության ժամկետի ակնհայտ խախտմամբ: Առաջին ատյանի դատարանում հայտարարում եմ՝ հարգելի դատարան՝ էս ի՞նչ եք անում, ասում են՝ գնացեք, բողոքեք:

10 հայցից երեքը վարույթ է ընդունվել ընդդատության կանոնների խախտմամբ: Հիշեցնում եմ՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացու գործը, որի դեպքում պատասխանողները Սյունիքում են, գործը քննվում է Երեւանի ընդհանուր իրավասության դատարանում, պատասխանում են՝ գնացեք, բողոքեք:

Տեղի է ունեցել մի աննախադեպ բան, ընդ որում՝ ո՛չ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը նախադեպ ունի, ո՛չ Հայաստանի վճռաբեկ դատարանը: Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ կոկրետ անձի մասով դադարեցվել է Սահմանադրության 42-րդ հոդվածի գործունեությունը Սյունիքում: Կրկնում եմ՝ նախադեպը չունեցող դատական որոշում է կայացվել:

Ամսական 40 մլն «աշխատավարձ» ստացող Մեր Պոլոսկովը եւ մյուսները 110 հազար դրամ աշխատավարձ ստացող խմբագրից պահանջում են մոտ 20 մլն դրամ փոխհատուցում՝ որեւէ ապացույց չբերելով, թե ինչ վնաս են կրել մեր հրապարակումների հետեւանքով:

Ավելին ասեմ՝ բոլոր հայցերով, իբրեւ հայցի ապահովման միջոց, կալանք է դրվել Սամվել Ալեքսանյանի գույքի վրա: Ահա այս վիճակում է հայտնվել «Սյունյաց եր-

«Չաարատ Կապանը»՝ մարզկենտրոնի կայուն զարգացման երաշխավոր

էջ 1

գործադիր ղեկավարության ապաքաղաքական, ապակուսակցական վարքը: Նման տնտեսվարողի կարիք Սյունիքը, առանձնապես մարզկենտրոնը վաղուց էին զգում: Այնպես որ կարող ենք փաստել՝ Կապանի կոմբինատն այլեւս քաղաքական մահակ կամ կոյր գործիք չէ օրվա իշխանությունների ձեռքին:

«Չաարատ Կապան» ՓԲ ընկերությունը մարզկենտրոնի ամենախոշոր գործատուն է: Ընկերությունն այսօր ունի 1120 աշխատակից, 300 հոգի էլ աշխատում են ընկերությանը ծառայություններ մատուցող կապալառուների մոտ: Ընդ որում՝ 2019-ի հունվարի 1-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը 903 էր: Եվ ուրեմն՝ ոչ միայն նոր աշխատատեղեր են ստեղծվել, այլեւ... Գրեթե բոլոր աշխատակիցները Կապան քաղաքի ու շրջակա գյուղերի բնակիչներ են, ինչն ամենեւին երկրորդական հարց չէ զբաղվածության լուրջ խնդիրներ ունեցող մեր տարածաշրջանում:

Մենք ականատես էինք 2018-ին այդ կոլեկտիվում ստեղծված ծայրահեղ լարված իրավիճակին, որ հետեւանք էր այնտեղ տարիներ շարունակ իշխող սոցիալական անարդարության, կամայականությունների, մարդու իրավունքների շարունակական խախտումների:

Քանդվել է այն պատը, որ նախորդ տարիներին կառուցվել էր տեղացի ու դրսեկ մասնագետների անհավասարության շաղախով: Դա արտահայտվեց նաեւ նրանց աշխատավարձերի հսկայական ու չհիմնավորված տարբերությունը վերացնելու հարցում: Այսօր ընկերության աշխատակիցների միջին ամսական աշխատավարձը հանրապետական միջինից զգալիորեն բարձր է: Աշխատակիցներին շահագրգռելու համար, աշխատավարձից բացի, կիրառվում է պարգեւավճար՝ աշխատավարձի 15-20 տոկոսի չափով՝ ամենամսյա պլանների կատարման դիմաց:

Միեւնույն ժամանակ՝ ամեն ամիս իրականացվում է մրցույթ ընկերության ստորգետնյա աշխատանքներում զբաղված հիմնական մասնագետների միջեւ: Արդյունքում՝ ընտրվում են լավագույն աշխատակիցները, ովքեր էլ, բացի վերը նշված պարգեւավճարից, լրացուցիչ խրախուսվում են:

«Չաարատ Կապանը» հենց սկզբից գիտակցել է իր պատասխանատվությունը համայնքի, ազդակիր բնակավայրերի հիմնախնդիրների ու մտահոգությունների հանդեպ:

Առանձնակի ուշադրության են արժանացել Կապան քաղաքի եւ Գեղանուշի հոգսերը: 2019-ին Գեղանուշում, օրինակ, նախակրթարան վերանորոգվեց, դպրոցում դասասենյակ կառուցվեց. այդ կրթօջախում նաեւ ջերմոց կկառուցվի: Իսկ Կապանում... Կարեւոր ծրագրերից էր «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի պոլիկլինիկայի «Կանանց կոնսուլտացիա» բաժանմունքի վերանորոգումը:

Բուժական այդ հաստատությունում կատարվում են այլ աշխատանքներ եւս: Աշխատանքներ են տարվում Կապանի թիվ 2 երաժշտական ու գեղարվեստի դպրոցների, նաեւ Լեռնագործների 16 հասցեում գտնվող նախադպրոցական ուսումնական հաստատության շենքերում:

Աշխատանքային այդ հասցեների ցանկը, անշուշտ, կհամալրվի. ներկայումս մարզպետարանի ու համայնքապետարանի հետ ընկերության ղեկավարությունը նոր ծրագրեր է քննարկում: Եվ, այդ բոլորով հանդերձ, Կապանի առջեւ ծառացած թիվ 1 խնդիրը բնապահպանական շեղված իրավիճակի շտկումն է: Ուստի եւ մարզկենտրոնում ու մերձակա բնակավայրերում կարեւոր է «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության բնապահպանական քաղաքականությունը:

Հետադարձ հայացք ձգելով անցած մեկ տարվա զարգացումներին՝ տեսանելի է դառնում ակնհայտը՝ «Չաարատ Կապան» ընկերությունը որդեգրել է մի գործելակերպ, որը հետապնդում է շրջակա միջավայրի վրա հանքարդյունաբերության ազդեցությունը նվազագույնի հասցնելու քաղաքականություն:

Ուշագրավ էր, ասենք, հանքաջրերի մաքրման կայանի շահագործումը, որի շնորհիվ հանքերից հոսող ջրերը, մաքրելուց հետո, օգտագործվում են արտադրական գործընթացների ու կարիքների համար:

Այնուհետեւ՝ Գեղանուշի պոչամբարի ընդլայնման՝ վաղուց տարփողվող-քննարկվող հարցը, դուրս է եկել «Չաարատ Կապանի» օրակարգից: Փոխարենն այնտեղ իրականացվել են պատվարների հավելյալ ամրացման աշխատանքներ եւ շարունակելու են իրականացնել:

Ուշադրության արժանի մի հանգամանք եւս. ընկերությունը լուծեց տարիներ շարունակ կենտրոնական հանքուղուց եկող ծանր մետաղներով հագեցած կեղտաջրի խնդիրը, ինչը թեեւ ընկերության իրավասության շրջանակներում չէր:

Նաեւ լրացուցիչ աշխատատեղեր ստեղծվեցին համայնքի բնակիչների համար. ի դեպ՝ համապատասխան կազմակերպությունն իրականացնում է ջրերի մաքրման գործընթաց, որի շնորհիվ ստացված պղնձարջասպը գնվում է ընկերության կողմից, ինչն էլ ծառայում է արտադրության կարիքներին (նախկինում պղնձարջասպը գնվում էր Թուրքիայից):

Ընկերության գործունեության մեջ ոչ պակաս առաջնային է անվտանգ աշխատանքի ապահովումը, մանավանդ որ հանքաքարի արդյունահանումն իրականացվում է ստորգետնյա եղանակով: Որքանով տեղյակ ենք, ստորգետնյա հանքը վերազինվում է արդիական տեխնիկական միջոցներով, որն առավել անվտանգ է դարձնում մարդկանց աշխատանքը: Այդ նպատակով շարունակաբար ուսուցողական դասընթացներ են կազմակերպվում հանքագործների համար:

Տեխնիկական վերազինման, արդիականացման աշխատանքներ են կատարվում նաեւ վերգետնյա տեղամասերում ու հատկապես հարստացուցիչ ֆաբրիկայում:

«Չաարատ Կապան»-ի հիմնարար արժեքներից է աշխատանքների թափանցիկությունը:

Հենց այդ ընկերության օրինակով շատերը համոզվեցին, որ կարելի է ձեռնարկատիրությամբ զբաղվել, բիզնես անել՝ գործընթացները, մասնավորապես ապրանքների ու ծառայությունների գնման մրցույթները դյուրացնելով ու հանրայնացնելով, մրցույթներին մասնակցել ցանկացողների ճանապարհի արհեստական խոչընդոտները վերացնելով:

Հիշեցնենք, որ «Չաարատ Կապան» ընկերությունը շահագործում է Սյունիքի մարզի Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրը: Այն, ինչպես նշեցինք, շահագործվում է ստորգետնյա եղանակով, արտադրվում են պղնձի եւ ցինկի խտանյութեր, որոնք պարունակում են ոսկի եւ արծաթ: Ասել է թե՝ արտադրվում-վաճառվում են ոսկի, արծաթ, պղինձ եւ ցինկ:

Հիշեցնենք նաեւ՝ Կապանի լեռնահարստացման կոմբինատը 2019 թ. հունվարից հանդիսանում է բրիտանական «Չաարատ Գոլդ Ինթերնեշնլ Լիմիթեդ» (Chaarat Gold International Limited) ընկերության միավոր: Վերջինս արագ զարգացող հանքարդյունաբերական կազմակերպություն է, որ հավակնում է դառնալ ոսկու արտադրության խոշոր ընկերություններից մեկն աշխարհում:

Ընկերության գործունեության մեջ առաջնայինն ու կարեւորն անվտանգ աշխատանքն է, աշխատակիցների բարեկեցությունը եւ շրջակա միջավայրի անխաթարության ապահովումը: Ընկերությունը Հայաստանում երկարաժամկետ ծրագրեր է նախատեսում իրականացնել, որոնց մի մասն արդեն իսկ ընթացքի մեջ է:

Մեր խոսքն ամբողջական չէր լինի, եթե չանդրադառնայինք որոշիչ մի հանգամանքի եւս:

«Չաարատ Կապան»-ի ներդաշնակ եւ երկարաշեն գործունեությունն իրողություն դարձավ ընկերության գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանի եւ նրա թիմի հետեւողական ջանքերի շնորհիվ:

Թեեւ գլխավոր տնօրենը համեմատաբար երիտասարդ է, բայց լեռնահանքային արդյունաբերության ոլորտում փորձառու ու դրական համբավ ունեցող կազմակերպչի ճանաչում ունի:

Անցած մեկ տարում ակնհայտ դարձան նրա աշխատաոճի գլխավոր բնորոշիչները՝ թափանցիկ գործելակերպ, ազնվություն եւ անկեղծություն գործընկերային հարաբերություններում, մեծագույն հարգանք մարդկանց ու սյունիքյան արժեհամակարգի հանդեպ, պետական մտածելակերպ, հետաքրքրություն նորի ու արդիականի հանդեպ, ընդերքի ու շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվություն, մարզկենտրոնի եւ մերձակա գյուղերի բնակչության մտահոգություններն իրենը դարձնելու կարողություն:

Ահա այսպիսի տնտեսական, կադրային, բարոյական ռեսուրսներով ու չափորոշիչներով էլ «Չաարատ Կապան» ՓԲ ընկերությունը թեւակոխել է 2020 թվական, որը, ակնկալում ենք, կնշանավորվի նոր հաջողություններով:

Ակնկալում ենք նաեւ, որ հաջողությունները կդրսեւորվեն հատկապես Կապան քաղաքի ու մերձակա գյուղերի հիմնախնդիրների լուծման ոչ դյուրին ասպարեզներում:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հ.Գ. «Սյունյաց երկրի» խմբագրությունը ժամանակ առ ժամանակ նամակներ է ստանում մարզկենտրոնի եւ մերձակա գյուղերի բնակիչներից, ովքեր, իբրեւ շահառու, անդրադառնում են «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության գործունեությանը: Այդ նամակներից երկուսը՝ ստորեւ:

Ռաֆիկ Հարությունյան,
Կապանի վետերանների խորհրդի նախագահ

Կապանի տարածաշրջանի վետերանների անունից խորին շնորհակալություն եմ հայտնում Կապանի լեռնահարստացման կոմբինատի տնօրինությանը՝ հանձին գլխավոր տնօրեն Դավիթ Թովմասյանի: Նա իր պաշտոնավարման կարճ ժամանակամիջոցում հասցրել է հոգատարություն եւ հարգանք դրսեւորել վետերաններիս հանդեպ: 2019 թ. մայիսի 9-ի՝ Հաղթանակի օրվա առթիվ յուրաքանչյուր վետերանի հատկացրեց 30 հազար դրամ, իսկ այս Ամանորի եւ Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ վետերաններս ստացանք ծանրոցներ՝ ինչ բարիքներով ասես: Ընդ որում՝ առաջին դեպքում գլխավոր տնօրենն անձամբ այցելեց եւ հանձնեց դրամական պարգեւները:

Գայանե Գրիգորյան,
Գեղանուշի միջնակարգ դպրոցի տնօրեն

Գեղանուշը միշտ էլ եղել է Կապանի լեռնահարստացման կոմբինատի հոգածության ներքո: Շուրջ չորս տարի է, ինչ օրական երկու անգամ ընկերության աջակցությամբ իրականացվում են Կապան-Գեղանուշ ուղեւորափոխադրումները, փոխհատուցվում դպրոցի 5-12-րդ դասարաններում սովորողների դասագրքերի վարձավճարները:

Անցած տարում ընկերության կողմից մասնակի վերանորոգվել է դպրոցի տարածքից մի հատված՝ առաջիկայում նախակրթարան հիմնելու համար: 2019 թ. ընկերությունն Ամանորի նվերներ տրամադրեց դպրոցի 1-ից 12-րդ դասարաններում սովորող 59 աշակերտի:

Ողջունելի է, որ «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության կողմից առաջնահերթ խրախուսվում են բնապահպանական ծրագրերը. դպրոցի աշակերտական խորհրդի կողմից ներկայացված «Կանաչ բացօթյա դասասենյակ» ծրագրին ամբողջովին օժանդակել եւ ցանկություն են հայտնել ապահովել շարունակական ընթացք՝ ջերմոց-լաբորատորիայի հիմնում, հազվագյուտ բուսատեսակների աճեցում, կանաչ գոտիների ստեղծում... ■

կիր» թերթը:

Հիմա կհարցնեք՝ ինչի՞ համար են Ձեր լրատվամիջոցին հալածում: Պատասխանեմ՝ մենք շատ անմեղ հարցեր ենք տալիս՝ ովքե՞ր են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականատերերը, ովքե՞ր են 2014 թ. սկսած Սյունիքում կատարել սեփականության վերաբաշխում եւ ի՞նչ ճանապարհով:

Ու բազմաթիվ մարդիկ, որոնց իրավունքները ոտնահարվել են 2016-2018 թ. Սյունիքի մարզպետ Վահե Ա. Հակոբյանի կողմից, երկու տարի է՝ դատարաններում են, պետական ատյանները չեն խառնվում, լուռ հայեցողի դերում են:

Որպես լրատվամիջոց, կարո՞ղ ենք ակնկալել պետության աջակցությունը մեր իրավունքների պաշտպանության հարցում:

Այնուհետեւ՝ Դուք չե՞ք պատրաստվում գնահատական տալ այն ամենին, ինչ տեղի է ունեցել վերջին տարիներին Սյունիքի մարզում:

Նիկոլ Փաշինյան – Պարոն Ալեքսանյան, ես Ձեր ասածներն ի գիտություն եմ ընդունում:

Պարոն Սարգսյան, յուրաքանչյուր հարցով անհրաժեշտ է պարզաբանել՝ ինչ է տեղի ունենում, ինչ է նշանակում, որն է իրականությունը, որն է չափազանցությունը, որն է ճիշտ, որն է սխալ:

Սամվել Ալեքսանյան – Ինչ վերաբերում է խնդրին, թե դատարանն ինձ զրպարտության մեջ մեղադրել է... Գիտե՞ք՝ ինչ է եղել, Հայաստանի ամենախոշոր ֆինանսական կազմակերպության տնօրենը թերթի դեմ երկամյա ճակատամարտում շահել է չորս հազար դրամ: Շուտով հանդիսավոր պայմաններում չորս հազար դրամը կուղարկենք Մհեր Պոլոսկովին:

ՊԱՏՐԱՍՏԵՑ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԸ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման 28-րդ տարեդարձին նվիրված տոնական միջոցառումներ Սյունիքում

Բանակի 28-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներ Մեղրիում

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Դայաստանի Հանրապետության զինված ուժերի հարգելի՛ զինվորներ, սպաներ, բարձրաստիճան սպաներ, սիրելի՛ ազատամարտիկներ

Հարգելի՛ հայրենակիցներ

Շնորհավորում եմ բոլորիս ազգային հպարտության զգացում պարգեւող այս տոնի՝ Հայոց բանակի կազմավորման 28-ամյակի կապակցությամբ:

Բանակի տոնը թե՛ մեզ, թե՛ հաջորդ սերունդների համար մարմնավորում է մեր պետության ուժն ու հայ զինվորի բազկի զորությունը, սերն ու նվիրվածությունը հայրենիքի հանդեպ:

Մեր շնորհակալությունը՝ Հայոց բանակի կառուցման գործում ներդրում ունեցողներին. նրանցից շատերն այսօր էլ մեր զինված ուժերի շարքերում շարունակում են իրենց փորձն ու հմտությունները, գիտելիքներն ու ոգին փոխանցել նորակոչիկներին, մեր խոնարհումը՝ այն հերոսացած անուններին, ովքեր այսօր մեզ հետ չեն, բայց շարունակում են ոգեշնչման աղբյուր լինել նոր սերնդի համար:

Հայրենիքի սիրելի՛ պաշտպաններ, մաղթում եմ, որ այլեւս չլինեն պատերազմներ, եւ ձեր ծառայությունները հայրենիքին մատուցեք խաղաղ պայմաններում: Առողջություն, ամուր ոգի, անվտանգ ծառայություն եւ մասնագիտական նոր բարձունքներ եմ ցանկանում ձեզ, երջանկություն եւ ընտանեկան ջերմություն:

Շնորհավո՛ր տոնդ, Հայո՛ց հաղթանակած բանակ: ■

Փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը Սիսիանում մասնակցել է Բանակի 28-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներին

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Մհեր Գրիգորյանի գրասենյակից, տոնական միջոցառումները մեկնարկել են Սիսիանի հրապարակում հետախուզական վաշտի ցուցադրական վարժանքներով եւ զորամասի անձնակազմի հանդիսավոր երթով: Այնուհետեւ փոխվարչապետն այցելել է Զոհված ազատամարտիկների զինվորական պանթեոն, որտեղ ծաղիկներ է խոնարհել եւ հարգանքի տուրք մատուցել նահատակների հիշատակին:

Տոնական միջոցառումների շրջանակներում Մհեր Գրիգորյանը դիտել է ռազմական տեխնիկայի, զենքի եւ զինամթերքի ցուցադրությունը եւ Սիսիանի մշակույթի տանը ներկա գտնվել տոնի առթիվ կազմակերպված համերգին, որի մեկնարկից առաջ հանդես է եկել շնորհավորական խոսքով, որում մասնավորապես ասել է.

«Հարգելի հայրենակիցներ,

Ինձ համար պատիվ է այսօր շնորհավորել Հայոց բանակի 28-րդ տարեդարձը եւ մասնավորապես անել դա Սիսիանում:

Հայոց բանակի տարեդարձը բոլորիս համար կարեւորագույն արժեքների՝ հայրենիքի, անկախության, անվտանգության ու խաղաղության վերահիմնադրման օրն է:

Հայոց բանակը մեր հպարտությունն է, պետականության կարեւոր հիմնասյուներից մեկը:

Դա է պատճառը, որ Կառավարությունը ջանք չի խնայում բանակում բարեփոխումներ իրականացնելու եւ զինվորների ծառայության պայմանները բարելավելու ուղղությամբ:

Արդիական զինատեսակների ձեռքբերումը, ինչպես նաեւ ռազմարդյունաբերության եւ բարձր տեխնոլոգիաների զարգացումը ստեղծում են պայմաններ մեր զինծառայողների համար ժամանակակից միտումներին համահունչ եւ համարժեք քայլերի իրականացումն ապահովելու ուղղությամբ:

Մենք կարեւորում ենք Հայոց բանակի արդիականացման հարցում մարդկային ռեսուրսի ներգրավումը, քանի որ ժամանակակից սպառազինության եւ ռազմական տեխնիկայի արդիականացման տեմպերը ուղղակիորեն կապված են մարդկային ներուժի բացահայտման հետ:

Օգտվելով առիթից՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Հայոց բանակի զինվորներին ու սպաներին՝ իրենց առաքելությունը պատշաճ կերպով իրականացնելու համար:

Չենք կարող այս օրը չհիշել ու հարգանքի տուրք չմատուցել նաեւ բոլոր նահատակներին, ովքեր իրենց կյանքի գնով պաշտպանեցին մեր հայրենիքը:

Իհարկե, մեր բանակն ունի մարտական բարձր պատրաստվածություն, բայց ինչն էլ եղել ու մնում մեր բանակում որպես մնայուն արժեք՝ մեր զինվորների նվիրվածությունը եւ մարտական ոգին:

Դա է թույլ տալիս Հայաստանին վստահ քայլել առաջ՝ լավ իմանալով, որ մեր թիկունքը պահում է Հայոց հզոր բանակը:

Թող խաղաղությունը լինի հարատեւ եւ կայուն մեր երկրում:

Հայոց բանակին մաղթում եմ ամուր ոգի, իսկ հայ զինվորին՝ բարի ծառայություն»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Կապանում նշվեց Հայոց բանակի 28-րդ տարեդարձը

Հայոց բանակի կազմավորման 28-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունների շարքը մարզկենտրոն Կապանում սկսվեց Գարեգին Նժդեհի հրապարակից: Առավոտյան ժամը 10:00-ին հանդիսավոր տողանի էին կանգնել Կապանում տեղակայված զորամասի սպաները եւ զինվորները:

Օրվա խորհրդին նվիրված հանրահավաքը բացեց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը, ով շնորհավորանքի խոսքում հիշեցրեց պատմահայր Մովսես Խորենացու խոսքերը. *«Թեեւ մենք փոքր ածու ենք եւ թվով շատ սակավ, բայց մեր երկրում էլ շատ գործեր կան հիշատակելու»*:

Օրվա խորհրդին պատշաճող ելույթներ ունեցան Կապանում տեղակայված զորամասի հրամանատար, գնդապետ Գարիկ Պողոսյանը, Կապանի համայնքապետ Գեւորգ Փարսյանը, Արցախյան պատերազմին մասնակցություն ունեցած կին վետերանների միության նախագահ Մելանյա Գեւորգյանը, Կապանի թիվ 10 միջնակարգ դպրոցի աշակերտ, հաղթանակած բանակի ապագա զինվոր Նարեկ Գաբրիելյանը:

Համայնքի ղեկավարը մասնավորապես ընդգծեց Կապանի դերը Հայոց բանակի կայացման եւ մերօրյա հաղթանակների գործում, մանավանդ Կապանի բրիգադի, որ թշնամուն մեծ կորուստներ պատճառելով՝ կարողացավ ապացուցել, որ անհնար է կոտրել կապանցիների մարտական ոգին:

Այնուհետեւ հանդիսության մասնակիցները շարժվեցին Բաղաբուրջի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու Մեծ հայրենականում եւ մերօրյա պատերազմում զոհված ազատամարտիկների հիշատակին:

Օրվա երկրորդ կեսին Կապանի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ համերգ՝ կենտրոնի երաժիշտ-կատարողների, պարային խմբերի, Կապանի քաղաքապետարանի ժողովրդական նվագարանների անսամբլի եւ Կապանում տեղակայված զորամասի զինվորների մասնակցությամբ: Երգը, պարը, հումորը միախառնվել էին իրար:

Մշակույթի կենտրոնի հարակից տարածքում ցուցահանդես էր բացվել՝ Հայոց բանակի զենքերի, զինամթերքի եւ սպառազինության ցուցադրությամբ, որոնց հաճույքով ծանոթանում էին դեռահասները: Իսկ բացօթյա զինվորական ճաշարանում կարելի էր համտեսել զինվորականներին տրվող խորտիկներն ու ճաշատեսակները:

Մի խումբ ազատամարտիկներ այցելեցին Գարեգին Նժդեհի հուշահամալիր՝ ծաղիկներ խոնարհելով ազգի նվիրյալի հուշակոթողին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հյուր էին զինվորները

Ճյունիքի մարզային գրադարանի արվեստի բաժնում տեղի ունեցած ցերեկույթը «Քեզ, իմ հայրենիք» խորագրի ներքո անցկացվեց: Գրադարանի արվեստի բաժնի վարիչ Ելենա Լալազարյանը ցերեկույթի բացման խոսքում անդրադարձավ հայոց զինուժի պատմությանը, հայոց բանակի հերոսական դրվագներին, Երկրորդ աշխարհամարտում հայ մարտիկների սխրանքներին, Արցախյան պատերազմին կապանցի ազատամարտիկների մասնակցությանը: Միջոցառմանը մասնակցում էին Կապանում տեղակայված զորամասի հրամանատարի՝ բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ, փոխգնդապետ Արթուր Մարտիրոսյանը, ժամկետային զինծառայողներ: Զինվորներ Ֆիլիպը, Հովսեփը, Սարիբեկն ու Էդգարը հանդես եկան երգերով եւ երաժշտական կատարումով: Նրանցից հետ չմնացին միջոցառմանը հրավիրված դպրոցականները:

Ցերեկույթին մասնակցում էին նաեւ կապանցի ստեղծագործողներ, ովքեր ընթերցեցին բանակին եւ հայ զինվորին նվիրված իրենց ստեղծագործությունները, որոնք վերաբերում էին մերօրյա ազատամարտին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Փոխվարչապետ Տիգրան Ավինյանը Գորիսում մասնակցել է Հայոց բանակի օրվան նվիրված միջոցառումներին:

Դունվարի 28-ին փոխվարչապետ Տիգրան Ավինյանը Գորիսում մասնակցել է Հայոց բանակի օրվան նվիրված տոնակատարություններին: Արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանի, Շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանի, ՀՈՒ Գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ-լեյտենանտ Ստեփան Գալստյանի եւ այլ պաշտոնատար անձանց հետ մասին Տիգրան Ավինյանը ծաղիկներ է զետեղել Արցախյան պատերազմում զոհվածների հուշարձանին:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին Տիգրան Ավինյանի գրասենյակից, տոնական օրվան նվիրված միջոցառումների շրջանակում փոխվարչապետը հանդես է եկել շնորհավորական ուղերձով, որում, մասնավորապես, նշել է.

«Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի սպաներ եւ զինվորներ,

Սիրելի՛ հայրենակիցներ,

Ինձ համար մեծ պատիվ է շնորհավորել բոլորիս Հայոց բանակի ստեղծման 28-ամյակի կապակցությամբ եւ ձեզ հետ միասին նշել այս տոնը:

Չնայած մեր բանակի ստեղծման շատ բարդ պայմաններին՝ հայ ժողովուրդը պատվով ու հաղթանակով դուրս եկավ փորձությունից եւ ստեղծեց հզոր ու մարտունակ զինված ուժեր: Այսօր հայոց բանակը ոչ միայն պետական ամենակայացած ինստիտուտներից մեկն է, այլեւ հայ ժողովրդի անվտանգության հուսալի երաշխավորը:

2018թ. թավշյա հեղափոխության եւ դրա արդյունքում Հայաստանում մեկնարկած բարեփոխումների ազդեցությունը, կարծում եմ, առաջինը զգացել է հենց բանակը: Հենց սկզբից զինված ուժերը եղել են հանրապետության քաղաքական ղեկավարության անմիջական ուշադրության ներքո: Առաջին բարեփոխումները սկսեցինք բանակից՝ զինվորների կենսապայմանների բարելավման, անհրաժեշտ կենցաղային պարագաների ապահովման, սննդի համակարգի արմատական փոփոխման գործնական միջոցառումներով:

Այսօր քայլ առ քայլ եւ հետեւողականորեն իրականացնում ենք բոլոր զորամասերում բարձրորակ եւ այլընտրանքային սննդի ապահովման մեխանիզմներ ներդնելու քաղաքականություն, որը ոչ միայն երաշխավորում է զինվորի առողջությունը, այլեւ ինքնին հանդիսանում է համակարգային բարեփոխում: Այս ընթացքում Հայաստանի իշխանությանը հաջողվեց նաեւ, ինչպես օրերս վերահաստատեց վարչապետը, ազատել մեր պետությունն ու ժողովրդին «80-ականների զենքի» բարդույթից: Այն ռազմական գնումները, որոնք իրականացրել է Հայաստանի կառավարությունը 2018թ.-ից մինչ օրս, անհնար է գերագնահատել:

Ձեռք բերված նոր զինատեսակները թե՛ քանակի, թե՛ որակի տեսանկյունից խիստ կարեւոր փոփոխություն են մտցնում ռազմական հավասարակշռության մեջ՝ թույլ տալով Հայաստանին ավելի վստահ պաշտպանել սեփական ազգային շահը: Ժամանակակից պահանջներին համապատասխան ռազմատեխնիկայի հետ միասին՝ Հայաստանը վերանայում է նաեւ իր պաշտպանական դոկտրինը՝ հարեւան երկրի ռազմատենչ հռետորաբանությանն ու գործողություններին արձագանքելով համարժեքորեն:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այս տոնական առիթը օգտագործելով՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր զինծառայողների ծնողներին ու ընտանիքներին: Այսօր հատկապես նրանց շնորհավորելու օրն է, որովհետեւ հենց նրանց անձնվիրությունը ու հայրենիքի հանդեպ սերը անհնար է պարզապես նկարագրել բառերով: Առավել քան համոզված եղեք, որ Հայաստանի կառավարությունը հնարավոր ամեն քայլ ձեռնարկում է՝ ձեր հոգսը թեթեւացնելու, մտահոգությունները փարատելու եւ ծառայության ժամկետի ավարտին ձեր որդիներին պատվով տուն վերադարձնելու ուղղությամբ:

Զինված ուժերի հարգարժա՛ն ներկայացուցիչներ,

Ձեր անկոտրում կամքը, արիությունն ու ռազմական հմտությունը մեր ժողովրդի խաղաղ քնի ու ստեղծագործ աշխատանքի հիմնական երաշխիքն են: Ձեր բազկի ուժով են կերտվել մեր հաղթանակները, ձեր քաջության շնորհիվ է սասանվել հակառակորդը եւ ձեր խոհեմությամբ են անառիկ պահվել մեր երկրի սահմանները:

Վերստին շնորհավորելով ձեզ տոնի կապակցությամբ՝ մաղթում եմ խաղաղ ծառայություն, ուժ եւ եռանդ հայրենիքի պաշտպանության պատասխանատու գործում:

Փա՛ռք Հայաստանի Հանրապետությանը, փա՛ռք հայ ժողովրդին»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

Խանածախը SOS է հնչեցնում

«Սյունյաց երկիր» լրագիրը ծրագրել եւ ձեռնամուխ է եղել մարզի սրբավայրերին նվիրված հատուկ համարի թողարկմանը: Այդ աշխատանքների շրջանակում լրագրի խմբագիր Սամվել Ալեքսանյանին խոստացել էի ցույց տալ Խանածախի տարածքում գտնվող մի «անհայտ» մատուռ:

Գյուղամիջում մի քանի խաչքարի լուսանկարումից հետո, որպես ուղեկցող, վերցնելով նաեւ դպրոցական տարիների իմ սիրելի դասղեկ Ալեքսանդր Մուսայելյանի թոռանը՝ կրտսեր Ալեքսանդր Մուսայելյանին, խմբագրի «Նիվայով» շարժվեցինք դեպի նպատակակետ:

Գյուղի հարավի վերջին շինությունը «ժիժի դոմն է»՝ գյուղի միջնակարգ դպրոցի նախկին շենքը, որտեղ էլ ավարտել եմ միջնակարգը: Դպրոցամերձ նախկին հողամասի խնձորենի այգուց, որից հատուկենտ ծառեր են կենդանի մնացել, սկսվում էր Խանածախի կոլտնտեսության երկու այգիներից մեկը, որը ձորի աջ ու ձախ մասերով գնում-հասնում էր համարյա մինչեւ Ագարու գետի ափի քրդաբնակ գյուղը: Երկրորդ այգին էլ Վաղատուրից դուրս եկող գետակի աջ ու ձախ ափերով իջնում-հասնում էր մինչեւ Ծիծեռնավանք: Սա խառը այգի էր, որտեղ գերակշռում էին հիմնականում կեռասենիները:

Երկու այգին էլ հիմնվել են երկիրն «այլանդակող» բոլշեւիկյան իշխանության տարիներին:

Խմբագրի խնդրանքով ես բարձրաձայն արտասանում եմ տեղանունները, պատմում դրանց ծագումը, դրանց հետ կապված դեպքերը:

«Շկոլի այգուց» հետո պուպուզ քարերն են, մի քանի հարյուր մետր դեպի ձորը՝ Վուտունց ձիլն է (Ճահիճ), որտեղ ծխախոտի ու բանջարեղենի սածիլներն էին աճեցվում, որից հետո սկսվում են խնձորի այգիները: Դրանց միայն հետքերն են երեւում, իսկ այգում գտնվող երկու մեղվանոցի եւ այգուց դուրս նրա հարեւանությամբ երկու ոչխարանոցի հետքերն էլ չկան: Ձորի աջ մասում շենքի հետքեր են. գյուղի չորս հավանոցից մեկն է մնացել (հանկարծ ինձ բռնում եմ սեւ մտքի վրա՝ իմ արարող ազգն այս է երբ դարձավ ավերող):

Ալեքսանդրի խորհրդով հիմնական ճանապարհից թեքվում, մտնում ենք այգու տարածք. այսպես կրճատում ենք ճանապարհը: Այգի կոչվածում ծառ չկա: Քիչ անց երեւում է թթենիների այգին: Այն տարածաշրջանի, գուցե նաեւ մեր երկրի ամենազանգվածային թթաստանն է: 70-ական թվականներին այդտեղ հաշվվում էր մոտ 1200 ծառ: Այգուն զուգահեռ մոտ 200 մետր գնալուց հետո թեքվում-մտնում ենք այգի: Ձորակից աջ երեւում է խոնարհված մատուռը: Խմբագիրն ու Ալեքսանդրն իջնում են ձորակը եւ բարձրանում դեպի այն: Ես մնում եմ մեքենայի մոտ: Այս ու այնտեղ հատված ծառերի հետքեր են: Ուշադրություն եմ դարձնում՝ հատվել էին հիմնականում հաստաբուն ծառերը: Ալեքսանդրը հետո բացատրեց, որ դրանք հատվել են որպես վառելափայտ: Այգու բարձրադիր մասով մայր առուն է: Նույնիսկ բանից անտեղյակին տեսանելի կլինի, որ մի քանի տարուց ավելի առուն ջրի երես չի տեսել: Խորհրդային իշխանության անկումից հետո մնացած հողատեսքերի հետ անխնամ են մնացել նաեւ այգիները: Դրանց թիվը համահունչ է գյուղի փակված առանձնատներին:

Խանածախում արդեն մոռանում են նաեւ վար ու ցանքսի մասին: 500 հեկտար ընտիր վարելահողերից միայն 50 հեկտարի վրա է վերջին 2 տարում ցանքս կատարվել: Վաղատուրում 300 հեկտարից միայն 30-ի վրա է այս տարի սերմ գցվել, իսկ Խոզնավարի դաշտերում վաղուց, շատ վաղուց տրակտորի ու կոմբայնի ձայն չի լսվել:

Լաչինի միջանցքի ազատագրումից հետո շատ գյուղերի հետ Խանածախի կարգավիճակն էլ փոխվեց: Այն դադարեց սահմանամերձ լինելուց: Դրա «օգուտը» եղավ այն, որ նոր իշխանությունների թողտվությամբ ոչ անհայտ անձինք, որոնց ամեն ինչ թույլատրելի էր, ապամոնտաժեցին եւ յուրացրեցին Որոտանի ոռոգման ցանցի Խանածախի 7 կիլոմետրանոց խողովակաշարը: Հետո հերթը հասավ «Բայանդուրի ձորի» այգիների ջրհան կայանին: Վերացվեց նաեւ այն: Իսկ անցած դարի 30-ական թվականներին Վաղատուրից Խանածախ հասնող ինքնահոս ջրամբարը վաղուց չէր գործում: Նման ինքնատիպ ձեւով «լուծվեց» ոռոգման ջրի հարցը Խանածախում:

Չգիտեմ հանրապետության այլ մարզերում ինչպես է, բայց մեզ մոտ ամեն ինչ փոխվել է այնպես, որ կարծես ոչինչ էլ չի փոխվել: Իսկ եթե ինչոր բան էլ փոխվել է՝ փոխվել է դեպի վատը: Գույները չեմ մգացնում. անցած դարի 60-70-ական թվականներին Խանածախի բնակչությունը գերազանցում էր 1500-ը, դպրոցականների թիվը՝ 450-ը: Այսօր այդ թվերը համապատասխանաբար կազմում են 806 եւ 85:

Մեզ ուղեկցող Ալեքսանդր Մուսայելյանը բացահայտում է՝ իմ դպրոցական 13 տղա ընկերներից միայն ես եմ մնացել գյուղում, իսկ իմ երեք երեխայից դժվար թե որեւէ մեկը մնա գյուղում: Գործերի նման ընթացքի դեպքում, իսկ այդ ընթացքը տեսանելի է նաեւ անզեն աչքով, մի քանի տարի անց Խանածախի հոգեւոր, պատմամշակութային արժեք ունեցող հուշարձանների թիվը կավելանա յուրահատուկ մի հուշարձանով եւս՝ արտաքինից շեն ու գեղեցիկ առանձնատներով անմարդաբնակ մի գյուղ՝ Խանածախ:

Առայժմ այդ գյուղում դատարկ է 102 տուն, առայժմ այդ շեն գյուղից «դուրս է եկել միայն մի Վաղատուր գյուղ, եւ մի Խոզնավար գյուղ:

Հ.Գ. Ներկայացրեցի իմ հայրենի գյուղի ոչ ամբողջական ներկա պատկերն առանց որեւէ չափազանցության: Թող թյուր կարծիք չստեղծվի, թե մարզի մյուս գյուղերում պատկերը կարող է այլ լինել, հետեւաբար նաեւ՝ ապագան առավել հուսալի: Երանի թե այդպես լիներ:

Մինչդեռ՝ Գորիսի տարածաշրջանի Սվարանց, Տանձատափ, Բարձրավան, Որոտան, Շուռնուխ, Արավուս, Խոզնավար, Վաղատուր գյուղերի դպրոցներում սովորում են 87 աշակերտ:

Ասում են՝ գյուղը երկրի սահմանապահն է, երկիր պահողն է, երկրի դեմքն է:

Այսպե՞ս ենք պահում երկիրն ու նրա սահմանները:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Մի չարչրկված հարցի մասին

Ֆուտբոլը երբ կվերադառնա Կապան

Անջնջելի է հանրապետության վարչապետի՝ Սյունիքի մարզկենտրոնում մամուլի ասուլիս տալը, ինչը եզակի հնարավորություն է ընձեռում, որ մարզաբնակ լրագրողներն իրենց մտահոգող ու հուզող հարցերն ուղղեն երկրի ղեկավարին:

Ճշմարիտն ասած, կապանցիներս ողջունում ենք հանրապետությունում սոցիալական արդարություն հաստատելու Նիկոլ Փաշինյանի ջանքերը: Բայց կան հարցեր, որոնք համառորեն չեն լուծվում: Խոսքն այն մասին է, որ Հայաստանի ֆուտբոլի բարձրագույն խմբի առաջնությունում հանդես եկող Կապանի «Գանձասար-Կապան» ֆուտբոլային թիմը տնային հանդիպումներն անցկացնում է Երեւանի ֆուտբոլային մարզադաշտերում՝ այդպիսով կապանցի ֆուտբոլասերին զրկելով մարզադաշտում ֆուտբոլ դիտելու հաճույքից:

Մինչդեռ կապանցիները մարզադաշտ հաճախելու եւ սիրելի թիմին երկրպագելու մշակույթ ունեն, որ տասնամյակներ ի վեր մշակվել է եւ մտել նրա կենցաղի մեջ: Բացի այդ, Կապանը ֆուտբոլային կադրեր պատրաստելու դարբնոց է եղել: Խորհրդային Միության «Բ» խմբի առաջնությունում հանդես եկող Ղափանի «Լեռնագործում» են մարզական առաջին մկրտությունը ստացել Նորայր Դեմիրճյանը, Ռուդիկ Ավանեսյանը, Հովհաննես Զանազանյանը, Արկադի Անդրեասյանը, ուրիշներ, ովքեր հետո ֆուտբոլային արվեստում փայլել են եւ Խորհրդային Միության չեմպիոն ու գավաթակիր դարձել հանրապետության առաջատար թիմում՝ Երեւանի «Արարատում»:

Սակայն մի անձնավորության՝ Սյունիքի նախկին մարզպետ Վահե Ա. Հակոբյանի քմահաճույքի եւ ամբիցիոզ նկրտումների պատճառով «Գանձասար-Կապանը» հրաժեշտ տվեց մարզկենտրոնի մարզադաշտին եւ մշտական «գրանցում» ստացավ մայրաքաղաքում: Մարդ, ով արհամարեց կապանցիներին եւ անտեսելով նրանց կամքը, չար խաղ խաղաց կապանյան ֆուտբոլի գլխին: Փաստորեն՝ «Գանձասար-Կապան» ֆուտբոլային թիմից միայն Կապան անունն է մնացել: Ինչպե՞ս չհիշես ժողովրդական խոսքը՝ անունը կա, ամանում՝ չկա:

Ի դեպ, «Գանձասար-Կապան-2» թիմն էլ անցյալ տարի հանվեց հանրապետության առաջնությունից, ասել է թե՝ մեծ ֆուտբոլն աստիճանաբար մեռնում է Կապանում՝ այլեւս չխոսելով մանկապատանեկան ֆուտբոլի մասին: Առանց այն էլ Կապանում սուղ են ազատ ժամանակ անցկացնելու հնարավորությունները, հիմա էլ՝ ֆուտբոլն է դարձել «վտարանդի»:

Սա որպես կշտամբանք չեմ ասում:

Հարգելի վարչապետ, 2018 թ. հուլիսի 5-ին, երբ իշխանափոխությունից հետո Կապան այցելեցիք եւ հանդիպեցիք կապանցիների հետ, մեզ համար երկար սպասված հայտարարություն եք արել. *«Ես ձեզ խոստանում եմ, որ շատ արագ ֆուտբոլը կվերադառնա Կապան»:*

Ցավոք, Ձեր այդ խոստումն իրականություն չդարձավ:

«Գանձասար-Կապանը» շարունակում է դեգերել օտար ափերում...

ԳԱԳԻԿ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

Ի՞նչ է սպասվում Կապանին. լինել օրեցօր ընդլայնվող Արծվանիկի պոչամբարի կցորդ, թե՞ մարդկանց արժանապատիվ ապրելու վայր

Կապանում նույնպես հունվարի 21-ին ճանապարհ փակվեց, ինչպես հանրապետության որոշ մարզերում, բայց ոչ սպանդային մորթի հետ կապված: «Իրավատեր կապանցիներ» հասարակական կազմակերպության անդամները, բնապահպանական ակտիվիստներն ակցիա կազմակերպեցին Կապան-Երեւան միջպետական ճանապարհին, ավելի ստույգ՝ Արծվանիկ բնակավայր չհասած, մատուռի շրջակայքում: Ցուցարարները նաեւ պաստառներ էին պարզել. ահավասիկ՝ «Կապանը չդիտարկել որպես հանքավայր, Կապանը բնակավայր է», «Կապանի բնակչությունը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատից պահանջում է առողջության փոխհատուցում»...

«Իրավատեր կապանցիներ» հասարակական կազմակերպության նախագահ Արմեն Փարամազյանը «Սյունյաց երկրին» փոխանցեց, որ իրենց պահանջը մեկն է՝ Կապանը հայտարարել աղետի գոտի՝ պայմանավորված Արծվանիկի պոչամբարի գոյությամբ:

Ճանապարհը բողոքի ակցիայի մասնակիցները 17-30-ին փակել էին, ավելի ստույգ այն փակ էր միայն բեռնատարների համար: Մոտ 40 րոպե ձգվեց այդ վիճակը, որից հետո ոստիկանները փորձեր արեցին ճանապարհը բացել նաեւ բեռնատարների համար: Իսկ քիչ ավելի ուշ դեպքի վայր ժամանեց Սյունիքի մարզային ոստիկանապետ, գնդապետ Գեւորգ Ազիզյանը, ով լսեց ցուցարարների պահանջները եւ հորդորեց՝ պետական մայրուղին բացել, ինչն էլ դրական արձագանք ստացավ:

Ոստիկանապետի եւ ցուցարարի միջեւ պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ հանդիպել հաջորդ շաբաթ եւ քննարկել Արծվանիկի վիճակը, թեեւ շրջափակման կազմակերպիչները հայտարարեցին, որ նման հանդիպումներ տեղի են ունեցել եւ մարզի դատախազի, եւ մարզպետի հետ, ովքեր, սակայն, ոչ մի կերպ չեն ազդել Արծվանիկի պոչամբարի ամենօրյա ընդլայնման աշխատանքներին ու պոչամբարի շուրջ ստեղծված անկառավարելի, անվերահսկելի իրավիճակին:

Եվ, այդուհանդերձ, ձեռք բերվեց դարակազմիկ որոշում՝ գալիք շաբաթ ցույցի կազմակերպիչները կհանդիպեն ոստիկանության մարզային վարչության պետի հետ:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Ոստիկանության, ԱԱԾ աշխատակիցներն ու ՌԴ սահմանապահները ձերբակալել են ծանր հանցագործության համար հետախուզվողին

Հունվարի 23-ին, ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության, ոստիկանության Մեղրիի բաժնի քրեական հետախուզության ծառայողները, համագործակցելով Ազգային անվտագության ծառայության Մեղրիի բաժնի եւ Ռուսաստանի սահմանապահ զինծառայողների հետ, իրականացնելով համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, Մեղրիում տեղակայված ուղեկալի պահպանության հատվածում Հայաստանի պետական սահմանն ապօրինի հատման փորձ կատարելու կասկածանքով հայտնաբերել եւ ձերբակալել են Գյումրի քաղաքի բնակիչ, 46-ամյա Ռուբեն Սարգսյանին: Ինչպես հայտնում է SHAMSHYAN.com-ը՝ «Ուդի»-մականվամբ հայտնի Ռ. Սարգսյանը ոստիկանության Կումայրիի բաժնի կողմից հետախուզվում էր:

Մարտի 5-ին, Քննչական կոմիտեում հարուցված քրեական գործով միջնորդություն էր ներկայացվել դատարան՝ Սարգիս Ֆարմանյանի եւ Նարե Ներսիսյանի նկատմամբ երկամսյա կալանքի որոշում կայացնելու մասին: Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի, ոստիկանության Էրեբունու բաժնի քրեական հետախուզության եւ համայնքային բաժանմունքերի ծառայողներն ապօրինի թմրամիջոցներ պահելու, օգտագործելու կասկածանքով բերման են ենթարկել նշված անձանց: Ոստիկանները հայտնաբերել էին նաեւ տարբեր տեսակի եւ քաշի թմրամիջոցներ: Էրեբունու ոստիկաններն ու քննիչները մի քանի օր շարունակ կատարել են հսկայածավալ օպերատիվ, քննչական եւ հետախուզական համատեղ գործողություններ, ինչի արդյունքում բացահայտվել էր պատվիրված սպանության դեպք:

2018 թ. մարտի 8-ին Շիրակի մարզի Ազատան գյուղից դեպի Արեւիկ գյուղ տանող ճանապարհին հայտնաբերվել էր Լոռու մարզի Սպիտակ քաղաքի բնակիչ Է.Գյուլազյանի դին: Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել էր, որ մահը վրա է հասել արտածին նյութով սուր թունավորումից: Էրեբունու ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ «Ուդի» մականվամբ՝ Ռուբեն Սարգսյանը 2018 թ. մարտին Նուբարաշեն բանտի թիվ 36 խցում՝ կալանավորված «Շաք» մականվամբ Ս. Ֆարմանյանի հետ պայմանավորվել է իր գործով տուժողից վրեժխնդիր լինելու շարժառիթով մեծ չափաբաժնով թմրանյութ ներարկելու ու թմրանյութային գերդոզավորում ձեւացնելու եղանակով նրան վերացնելու մասին: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ այդ ամենը իրագործել էին Ն. Ներսիսյանն ու Ս. Ֆարմանյանը: Սպանությունը պատվիրելու համար նախատեսված գումարի շուրջ համաձայնության գալուց հետո Ս. Ֆարմանյանը կապ է հաստատել Ն. Ներսիսյանի հետ եւ ստացել սպանությունը նման եղանակով գումարի դիմաց կատարելու վերաբերյալ վերջինիս համաձայնությունը: Ն. Ներսիսյանը գնացել էր Գյումրի, Է. Գյուլազյանի հետ դեռեւս չպարզված հանգամանքերում հանդիպել հյուրանոցում, որտեղ էլ Է. Գյուլազյանին ներարկել էր մեծ չափաբաժնով թմրամիջոց, իսկ հետո արդեն Է. Գյուլազյանն անօգնական, անգիտակից վիճակում հայտնվել էր Շիրակի մարզի Ազատան գյուղից Արեւիկ գյուղ տանող ճանապարհի 121-րդ կմ հատվածում:

news.am

Հայաստանից արտահանվող մետաղների խտանյութի պարունակությունը գաղտնիք է՝ պետությունն էլ երբեք դա չի ստուգել

2019 թվականի հունիսի 26-ից ՀՀ կառավարության աշխատակազմից փորձում ենք պարզել մի կարեւոր հարցի պատասխան՝ արդյոք պետական որեւէ մարմնի կողմից երբեւէ ստուգվե՞լ է Հայաստանից արտահանվող մետաղների խտանյութերի մեջ եղած բոլոր արժեքավոր տարրերի պարունակությունը: Նաեւ խնդրել էինք տեղեկացնել, թե ո՞ր պետական կառույցի կողմից, ի՞նչ պարբերականությամբ է դա արվել, եւ ինչպե՞ս է կարելի ծանոթանալ այդ տվյալներին:

Մեր հարցումն աշխատակազմից վերահասցեագրել էին ՀՀ պետական եկամուտների կոմիտե (ՊԵԿ), որտեղից ստացանք նախագահի տեղակալ Շուշանիկ Ներսիսյանի՝ կես էջ ծավալով պատասխանը: Պատասխանից պարզվեց, որ ՊԵԿ-ում որոշել են ոչ թե մեր

էջ 8

Մեր հայրենակից Կլիմենտ Հարությունյանի երկու գիրքը Մեծ հայրենականի մասին

Այս տարի Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի 75-ամյակն է լրանում, եւ հոբելյանից առաջ հաճելի անակնկալ է մատուցել պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Կլիմենտ Հարությունյանը, ով Հայրենական մեծ պատերազմի ժամանակաշրջանի լավագույն հետազոտողներից մեկն է հանրապետությունում:

Նա ընթերցողի սեղանին է դրել **«Հայ զինվորները Հայրենական մեծ պատերազմում Բելոռուսիայի համար մղված մարտերում»** գիրքը՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության, Բելառուսի Հանրապետության ազգային արխիվի, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի կաբինետի փաստական հարուստ նյութի հիման վրա (մի մասը՝ նորահայտ): Հեղինակը շարադրել է հայ մարտիկների մասնակցությունը Բելոռուսիայի ազատագրության համար մղված մարտերին, որին մասնակցել է 60 հազար հայ զինվորական, նրանցից 20 հազարը զոհվել է մարտերում:

Գիրքը բացվում է Հայաստանում Բելառուսի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Իգոր Նազարուկի ողջույնի խոսքով, որում մասնավորապես ասվում է. *«Այս գրքում մեզ եզակի հնարավորություն է ընձեռված ծանոթանալու քիչ հայտնի արխիվային նյութերի հետ, որոնք առնչվում են Հայրենական պատերազմի ժամանակ բելառուսական հողն ազատագրած հայ մարտիկների մասնակցությանը, ովքեր դրսեւորեցին արիություն եւ քաջություն, արժանացան զինվորական բարձր կոչման ու համաժողովրդական ճանաչման: Ցավոք, շատերը մարտի դաշտից չվերադարձան հայրենի օջախներ»:*

Գրքի շնորհանդեսը կայացել է 2019 թ. մայիսի 14-ին Հայաստանում Բելառուսի Հանրապետության դեսպանատանը:

Երկրորդ աշխարհամարտի անմոռաց էջերից է Բրեստի հերոսական պաշտպանությունը, որ սկսվել է պատերազմի առաջին օրերից: Բրեստ ամրոցի կայազորում ծառայում էր 200 հայ զինակոչիկ, նրանցից 76-ը ուսուցիչ էր, որոնց մի մասը՝ կապանցի: Ամրոցի հերոսական պաշտպանության տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված Սամվել Մաթեւոսյանի անունը: Այդ դժվարին օրերի դրվագներն իր հուշագրության մեջ, որ կոչվում է **«Արյունով ներկված լուսաբաց»**, վերակենդանացրել է Բրեստ ամրոցի ակտիվ պաշտպան Սոս Նուրիջանյանը (Կապանի Վաչագան գյուղից):

Գրքում առանձին գլուխ է հատկացվել հայ այն ռազմիկներին, ովքեր հարել են պարտիզանական շարժմանը եւ գործել են ընդհատակում: Նրանցից մեկը դասակի հրամանատար Վահան Գրիգորյանն է, ով կարողացավ ճեղքել հակառակորդի շրջափակումը եւ միանալ բելոռուսական պարտիզաններին: Նա մարտնչում էր Բաքվի 26 կոմիսարների անվան ջոկատում, որ գործում էր Մինսկ-Մոսկվա երկաթուղային մայրուղու վրա եւ թշնամու բազմաթիվ էշելոններ է շարքից հանել: Պատերազմի հաղթական ավարտից հետո վերադարձավ հայրենի շրջան եւ երկար տարիներ ղեկավարեց Կապանի ժողկրթության բաժինը, դարձավ հանրապետության վաստակավոր ուսուցիչ, պարգեւատրվեց «Պատվո նշան» շքանշանով:

Մեծ հայրենականի մասին հաջորդ գիրքը մի ընդգրկուն ուսումնասիրություն է: **«Հայ ռազմիկների մասնակցությունը Ղրիմի եւ Կերչի համար մղված մարտերին»** գիրքը երկրորդ աշխարհամարտում Ղրիմի եւ Կերչի ազատագրման մարտերում հայ ռազմիկների դերի եւ մեծ հաղթանակում ունեցած նրանց զգալի ավանդի մասին է:

Գրքի կազմին Թամանյան դիվիզիային նվիրված հուշակոթողի նկարն է: Ի դեպ, Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան 1943 թվականին, ազատագրելով Թամանյան թերակղզին, հոկտեմբերի 8-ին արժանացավ Թամանյան պատվավոր կոչմանը: Գրքում առանձին ենթավերնագրի տակ լուսաբանվում է հայ ռազմիկների մասնակցությունը Սեւաստոպոլի հերոսական պաշտպանությանը, ինչպես նաեւ արժեւորվում Հայկական 390-րդ դիվիզիայի դերը Կերչի համար մղված մարտերում, որն այդ արյունալի պաշտպանական կռիվներին մասնակցել է 1942 թվականի մայիսից: Ի դեպ, գրքում ճշտված է Ղրիմի եւ Կերչի մարտերի Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած հայ ռազմիկների ցուցակը, նրանք 11-են, նաեւ Հայաստանում ծնված, ազգությամբ հույն Կոնստանտին Խաջիեւը: Ղրիմի ազատագրության ժամանակ նոր սխրանքներ գործեց Խորհրդային Միության հերոս, գվարդիայի փոխգնդապետ, լեգենդար օդաչու Նելսոն Ստեփանյանը, ով հետագայում (1945 թ.) արժանացավ Խորհրդային Միության հերոսի երկրորդ ոսկե աստղին:

Գիրքը լույս է տեսել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի, տարածաշրջանային գիտակրթական կենտրոնների միավորման եւ «Ղրիմի բարեկամներ» միջազգային ասոցիացիայի հայկական բաժանմունքի աջակցությամբ: Հեղինակը նպատակահարմար է գտել գրքում հիշատակել Ղրիմի ծնունդ անվանի հայորդիներին՝ նավատորմի ադմիրալ Լազար Սերեբրյակով (Ղազար Արծաթագործյան), մեծ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկի, երկար ժամանակ Ղրիմում է ապրել ու ստեղծագործել կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը, կոմպոզիտոր Կարա Մուրզան եւ շատ ուրիշներ:

Պիտի ավելացնել, որ գրքի շնորհանդեսը տեղի է ունեցել ինչպես Երեւանում, այնպես էլ Ղրիմում՝ հայկական մշակույթի օրերի շրջանակում՝ Սիմֆերոպոլում կայացած կոնֆերանսի ժամանակ, որին մասնակցել է Կլիմենտ Հարությունյանը:

Երկու գրքում էլ հեղինակն առանձնահատուկ ջերմությամբ է գրում Բելոռուսիայի եւ Ղրիմի ու Կերչի ազատագրությանը սյունեցիների մասնակցության մասին:

Երեւանաբնակ մեր հայրենակցին շնորհավորելով երկու գրքի առիթով՝ ցանկացանք իմանալ, թե ինչ ծրագրեր ունի, մանավանդ որ այս տարում Հայրենական մեծ պատերազմին առնչվող հրապարակումներ շատ կլինեն՝ կապված մեծ հաղթանակի 75-ամյա հոբելյանի հետ:

Կ. Հարությունյանը փոխանցեց, որ 45 տարի աշխատել է Խորհրդային Միության եւ Ռուսաստանի կենտրոնական ու ռազմական արխիվներում, այդ ընթացքում ուսումնասիրել եւ հավաքել է, մասնավորապես, հայ ծովայինների մասին հսկայական փաստական նյութ: Նաեւ հայտնեց, որ օրերս տպարան է հանձնելու Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Իվան Իսակովի մասին գիրքը, իսկ հաջորդը նվիրված է հայ ժողովրդի զավակների մասնակցությանը Լենինգրադի հերոսական պաշտպանությանը: Նաեւ ծրագիր ունի հինգ հայ մարշալներին ներկայացնել առանձին գրքով:

Մի խոսքով, պատմաբանը, ում 80-ամյակը լրանալու է մայիսին, շարունակում է աշխատել արխիվներում եւ գրքեր հրատարակել:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հայաստանից արտահանվող մետաղների խտանյութի պարունակությունը գաղտնիք է՝ պետությունն էլ երբեք դա չի սպուգել

էջ 7

հարցերին պատասխանել, այլ իրազեկել մեզ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) հանձնաժողովի խորհրդի ինչ-որ որոշման գոյության եւ դրանով սահմանված «հանքաքարեր» եզրույթի մասին: Այնուհետեւ հղում են կատարել առաջին պարբերության մեջ գրված եւ մեր հարցադրումների հետ ընդհանրապես որեւէ առնչություն չունեցող տվյալներին ու տեղեկացրել, որ նույն ԵԱՏՄ-ի կանոնակարգերի շրջանակներում խտանյութ արտահանող ընկերությունից պահանջվում է փորձագիտական եզրակացություն ներկայացնել յուրաքանչյուր խմբաքանակի բաղադրության վերաբերյալ:

Քանի որ մեր հարցադրումներին ըստ էության պատասխան չէր տրվել ու չէին տրամադրվել պահանջված տեղեկությունները, իսկ նմանատիպ բովանդակությամբ պատասխանն ուղղակի անընդունելի է հետհեղափոխական Հայաստանում, մենք փորձեցինք վերականգնել ՀՀ քաղաքացիների՝ այս տեղեկություններն իմանալու իրավունքը: Խնդրի առնչությամբ դիմեցինք Մարդու իրավունքի պաշտպանի գրասենյակ՝ խնդրելով քննել հարցը եւ վերականգնել մեր խախտված իրավունքները:

ՄԻՊ-ի գործողությունների արդյունքում ստացանք արդեն ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանի ավելի լայնածավալ պատասխանը: Սակայն այդ պատասխանը նույնպես նախորդի ոճի մեջ էր. կրկին հղումներ էին արվում ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին, ՀՀ օրենքներին եւ ֆինանսների նախարարի 2015թ. մարտի 9-ի *«ՀՀ տարածքից մետաղների խտանյութի արտահանման համար մաքսային մարմիններին մետաղների խտանյութի փորձաքննության վերաբերյալ եզրակացության մեջ ներկայացվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին»* հրամանին:

Մինչեւ այս պատասխանի բովանդակային մասին անցնելը՝ ՊԵԿ-ին եւ այդ կառույցի նախագահին ուզում ենք հիշեցնել, որ Հայաստանի Հանրապետությունն անկախ պետություն է, գոյություն է ունեցել ԵԱՏՄ-ի ստեղծումից ու վերոնշյալ հրամանից շատ առաջ, եւ մեր երկրից ավելի քան երկու տասնամյակ արտահանվել են տարբեր մետաղների խտանյութեր: Մեր հարցերը վերաբերում էին անկախ Հայաստանի գոյության ողջ ընթացքին, այլ ոչ թե ԵԱՏՄ ստեղծումից հետո կատարված գործընթացներին: Անհասկանալի է, թե մեր եւ ՄԻՊ-ի հարցադրումներին հստակ պատասխանելու փոխարեն ինչո՞ւ են հղումներ արվում 2014թ. ստեղծված այդ կառույցի որոշումներին, ինչպես նաեւ ֆինանսների նախարարի 2015թ. հրամանին:

Հիմա՝ ըստ էության:

ՊԵԿ-ի նախագահի պատասխանում հիշատակվող 2015թ. հրամանում նշված է, որ ՀՀ տարածքից արտահանվող մետաղների խտանյութի արտահանման համար այլ փաստաթղթերի հետ միասին մաքսային մարմիններին ներկայացվում է նաեւ դրանց փորձաքննության վերաբերյալ եզրակացություն, որում ներառվում են նաեւ հետեւյալ տեղեկությունները.

Խտանյութի դեպքում չոր քաշում գտնվող տարրերի (պայմանագրով նշված մետաղների զանգվածային տոկոսային մեծությունները (%)), իսկ համաձուլվածքների դեպքում՝ պայմանագրում նշված տարրերի զանգվածային տոկոսային մեծությունները (%):

Ստացվում է, որ մաքսային մարմիններն ունեն որոշակի տեղեկություններ խտանյութի բաղադրության մասին, որոնք ներկայացնում են արտահանող ընկերությունները՝ այն էլ միայն ընդերքօգտագործման պայմանագրերով նշված տարրերի վերաբերյալ, իսկ պետության կողմից այդ տվյալների այլընտրանքային լաբորատոր վերստուգում չի իրականացվում, քանի որ մաքսային օրենսդրության շրջանակներում այդպիսի պահանջ սահմանված չէ: Բնականաբար խտանյութի մեջ կարող են լինել բազմաթիվ այլ թանկարժեք մետաղներ, որոնք կարող են չհայտարարագրվել եւ դուրս բերվել Հայաստանից՝ առանց որեւէ մաքսային վճարի: Բացի այդ պարզ չէ, թե որ երկրի լաբորատորիաներում են իրականացվում այդ փորձաքննությունները, հավաստագրված են արդյո՞ք դրանք, ինչպես է կանոնակարգվում այդ ամենն ու չկա արդյո՞ք շահերի բախում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից նույնպես ստացել ենք հոդվածի սկզբում նշված մեր հարցադրումների պատասխանը, որի մեջ կրկին հղումներ են արվում ԵԱՏՄ տարբեր որոշումների: Պարզվում է, որ նախարարությունը տրամադրում է մետաղների հանքանյութերի, խտանյութերի արտահանման լիցենզիաներ, բայց դրանց մեջ բոլոր արժեքավոր տարրերի պարունակության հայտարարագրման եւ պետության կողմից ստուգման պահանջ նախատեսված չէ, հետեւաբար նախարարությունն այդ մասին ոչ մի տեղեկատվություն չունի:

Ամփոփելով այս հատվածը՝ պետք է ցավով նշենք, որ պետության կողմից չի ստուգվում ու վերահսկվում Հայաստանից արտահանման մեջ հսկայական մաս կազմող (տարեկան 500-700 միլիոն ԱՄՆ դոլար) մետաղների խտանյութի եւ համաձուլվածքների պարունակությունը: Սա ուղղակի անթույլատրելի երեւույթ է, ու անհրաժեշտ են հրատապ օրենսդրական փոփոխություններ այս խնդիրը լուծելու համար:

Հիմա անցնենք մեր հարցման երկրորդ մասին, որը վերաբերում էր արտահանվող մետաղների խտանյութի պարունակության մասին տեղեկությունները ՀՀ քաղաքացիներին տրամադրելուն:

Ինչպես արդեն նշեցինք վերեւում, մաքսային մարմինները ստանում են որոշակի տեղեկություններ միայն մետաղների խտանյութի հայտարարագրված բաղադրության մասին, բայց ոչ թե սեփական ուսումնասիրությունների, այլ արտահանող ընկերությունների տրամադրած տվյալների հիման վրա: Բայց ինչպես իր պատասխանում նշել է ՊԵԿ նախագահ Դավիթ Անանյանը՝ կրկին հղում անելով ԵԱՏՄ մաքսային օրենսգրքին, այդ տեղեկություններին ծանոթանալու իրավունք ստացած պետական ծառայողներն իրավունք չունեն հրապարակելու կամ այլ անձանց փոխանցելու «պետական, առեւտրային, հարկային, բանկային եւ այլ գաղտնիքներ պարունակող տեղեկատվություն»:

Նա հղում է կատարել նաեւ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 3-րդ կետին, որի համաձայն պետական, բանկային, ապահովագրական, առեւտրական, ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունները մաքսային մարմինները կամ դրանց պաշտոնատար անձինք չեն կարող հրապարակել, օգտագործել անձնական նպատակների համար, տրամադրել երրորդ անձանց, այդ թվում՝ պետական մարմինների, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Անանյանը նաեւ կարծում է, որ մեր պահանջած տեղեկությունները կարող են պարունակել հարկային գաղտնիք եւս ու ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 63-րդ մասի ա) ենթակետի համաձայն՝ կարող է տրամադրվել հարկ վճարողի համաձայնությամբ:

Ամփոփում եւ առաջարկներ

Այս ողջ պատմությունից եւ նամակագրությունից ստացվում է հետեւյալ պատկերը.

- տպավորություն է ստեղծվում, թե Հայաստանը ԵԱՏՄ-ից առաջ գոյություն չի ունեցել կամ մետաղների խտանյութ ընդհանրապես չի արտահանել,
- պետական մարմինները չեն ստուգում Հայաստանից արտահանվող մետաղների խտանյութի եւ համաձուլվածքների պարունակությունը,
- ընդհանրապես չի վերահսկվում մեր արտահանման մեջ խոշորագույն մասնաբաժին ունեցող (30-40 տոկոս) գործընթացի այդ կարեւորագույն բաղադրիչներից մեկը,
- խտանյութի եւ համաձուլվածքների բաղադրության մասին արտահանող ընկերությունների՝ մաքսային մարմիններին ներկայացված տեղեկությունները ՊԵԿ-ի նախագահը համարում է գաղտնիք եւ որոշում է, որ Հայաստանի ընդերքի իրական սեփականատերերին՝ ՀՀ քաղաքացիներին, արգելված է այդ տեղեկատվության փոխանցումը:

Սա ուղղակի անթույլատրելի երեւույթ է, եւ կարծում ենք ՀՀ Ազգային ժողովն ու կառավարությունը պետք է հրատապ քննարկեն այս խնդիրն ու առաջարկեն օրենսդրական լուծումներ, որոնք պետք է ապահովեն հետեւյալ նվազագույն կարգավորումները.

1) Պետությունը պետք է մշտապես իրականացնի արտահանվող մետաղների խտանյութի եւ համաձուլվածքների բաղադրության լաբորատոր վերստուգումներ՝ հայտարարագրված եւ մնացած բոլոր տարրերի իրական պարունակությունները պարզելու նպատակով:

2) Այդ տեղեկատվությունը պետք է հասանելի լինի ՀՀ քաղաքացիներին՝ որպես մեր երկրի ընդերքի իրական սեփականատերեր:

3) Այս փոփոխությունները պետք է արվեն հնարավորինս արագ ու մասնակցային գործընթացով՝ հանրային ու մասնագիտական շերտերի ակտիվ ներգրավմամբ: Մենք որպես բնապահպանական քաղաքացիական խումբ պատրաստ ենք աջակցել դրանց իրականացմանը, եթե, իհարկե, կա փոխհամաձայնություն վերը նշված սկզբունքային խնդիրների շուրջ:

Հայկական բնապահպանական ճակատ կամավորական նախաձեռնություն

Էլ. փոստ՝ armecofront@gmail.com

Խոսք հրաժեշտի. Սուսաննա Նուրիջանյան

Հունվարի 17-ին Կապանի հասարակությունը վերջին հրաժեշտը տվեց վաստակաշատ ուսուցչուհի Սուսաննա Նուրիջանյանին, ում կյանքի կես դարն անցել է մանկավարժության ոլորտում, այն էլ նույն կրթօջախում:

Ծնվել է կրթության հարգն ու վարկն իմացող Աշոտ եւ Լուսիկ Նուրիջանյանների բարեպաշտ հարկի տակ:

Կապանի թիվ 1 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո բարձրագույն կրթություն ստանալու ձգտումը Երեւանի պետական համալսարան տարավ, որտեղ ուսանեց բանասիրության ֆակուլտետի ռոմանագերմանական բաժնում: Բարեբախտություն ունեցավ աշակերտել ակադեմիկոսներ՝ Հրաչյա Աճառյանին, Գրիգոր Ղափանցյանին, Էդուարդ Աղայանին, Սահակ Բագյանին, Գեւորգ Ջահուկյանին, Արսեն Տերտերյանին եւ ուրիշ շատ անվանիների:

Դասավանդեց տասնյակ սերունդների, պատահել է մեկին նուրբ դիտողություն է արել. *«Գիտեմ, որ մայրիկդ իմ առարկան լավ էր սովորում»:*

1954-ին ավարտելով բուհը՝ գործուղվեց Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոց:

«Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես» ճշմարտությունը նա դասապրոցեսում էր իրականացնում՝ սիրով ու նվիրումով իր սաներին ավանդելով Գյոթեի, Շիլլերի, Հայնեի լեզուն:

Ահավասիկ, «Բանավոր խոսքի զարգացումը օտար լեզվի դասերին» ընթերցման համար դրամական պարգեւի է արժանացել:

Ունեցավ աշակերտներ, ովքեր ընտրեցին սիրելի ուսուցչուհու մասնագիտությունը եւ բուհն ավարտելով՝ նրա հետ գերմաներեն էին դասավանդում կողք-կողքի, միեւնույն դպրոցում:

Սուսաննա Նուրիջանյանի դասերը հետաքրքիր էին անցնում, որում որոշակի դեր ուներ մեղմ հումորը, որն ավելի էր ջերմացնում աշակերտների հետ փոխհարաբերությունները: Պատահական չէ, որ նրա դասղեկությամբ դասարանների աշակերտներն աչքի էին ընկնում կարգապահությամբ, բարձր առաջադիմությամբ, օրինակելի վարքով:

«Ծնողները երեխային տալիս են մարմին, իսկ ուսուցիչը՝ հոգի, կամք եւ բարձրագույն իդեալներ»: Մեծ բանաստեղծի այս խոսքերն անվերապահորեն Սուսաննա Նուրիջանյանի վերաբերմամբ կարելի է ասել:

Խրախուսանքների եւ պարգեւների է արժանացել, բայց ամենաարժեքավոր պարգեւը համարում էր իր սաների հաջողությունն աշխատանքում, անձնական կյանքում, հանրության մեջ դրսեւորած վարք ու բարքով: Սաներն էլ որդիական սիրով ու հարգանքով էին վերաբերվում նրան:

Իսկ մանկավարժական կոլեկտիվների երեկույթներին մեղմանուշ ձայնով հնչեցնում էր «Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ...» երգը՝ արժանանալով գործընկերների երախտագիտությանը:

Հմայիչ ժպիտով, մեղմ բնավորությամբ, բարեհամբույր, զգայուն շրջապատի հանդեպ, - այդպիսին կմնա Սուսաննա Նուրիջանյանն իր բյուրավոր (սա բնավ չափազանցություն չէ) սաների, նրանց, ծնողների, բոլոր-բոլոր ճանաչողների մտապատկերում ու հուշերում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Հայտարարություն **«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ են բարձրագույն կրթությամբ հիմնական աշխատակիցներ 2019-2020 ուսումնական տարվա II կիսամյակում ներքոնշյալ առարկաների դասավանդման համար.**

1. Ֆիզկուլտուրա
2. Մաթեմատիկա
3. Իրավունքի հիմունքներ
4. Քաղաքագիտության հիմունքներ
5. Սոցիոլոգիայի հիմունքներ
6. Կլինիկական դեղաբանություն

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 5-25-70 կամ 093 97 24 92 հեռախոսահամարներով կամ այցելել Կապանի պետական բժշկական քոլեջ, Հասցե՝ ք. Կապան, Շահումյան 37Ա:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**
Էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1030, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 31.01.2020թ.: